ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԴԵՀԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԱՊՀՎՄ-ԳՀԱՊՁԲ-20/3

Ք. Երևան <<18>> հոկտեմբեր 2020թ.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանե հիմնադրամ ի դեմս ռեկտորի պ.կ. պրոռեկտոր Ռ.Վ. Աղգաշյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդե, մի կողմից, և ԱՁ Սարգիս Գասոյանը, որը գործում է վկայագրի հիման վրա, այսուհետ «Վաճառողե մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2450000 (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրությունե բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ	ԱՁ Սարգիս Գասոյան
Հասցեն՝ ք. Վանաձոր Շինարարների 12	Հասցեն ք.Վանաձոր Տարոն 4 Բել. 3/5
Բանկը՝ «Կոնֆերս բանկ» ՓԲ	Բանկ ԱԿԲԱ ԲԲԸ
Հ/Հ 19300090059530100	Հ/Հ 220059678338000
ՀՎՀՀ 01504054	ՀՎՀՀ 66981199
Ռեկտորի պ.կ., պրոռեկտոր ---------- Դ.Աղգաշյան	---------- Ս.Գասոյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 18 » Հոկտեմբեր 2020 թ. կնքված
ՀԱՊՀԿՄ-ԳՀԱՊՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
Հրավ. նախ. Չափ. համ.	գնումների պլանով նախ. միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դաս. (CPV)	անվանումը	Ապրանք. նշանը, մակիշը և արտադ. անվ,	տեխնիկական բնութագիրը	Չափ. միավ.	միավոր գինը/ՀՀ դրամ	Ընդ. գինը /ՀՀ դրամ	Ընդ. քան.	հասցեն	Ենթ. քան.	Ժամկետը***
1	31625100	հրդեհի հայտնաբեր-ման համակարգեր	PERFECTA 32 SATEL sp. z o.o.	Կառավարման վահանակ PERFECTA 32 Այս շարքի կառավարման վահանակները ապահովում են պաշտպանություն, որը համապատասխանում է 2-րդ դասի EN 50131 ստանդարտի պահանջներին: Համապատասխանում է եվրոպական EN 50131 2-րդ դասի ստանդարտին 8-ից 32 լարային ծրագրավորվող գոտիներ (հանգույցների օժանդակություն. NO, NC, EOL, 2EOL/NO, 2EOL/NC) 4-ից 12 լարային ծրագրավորվող ելք սնուցման 2 ելքներկառուցված մոդուլներ. GSM / GPRS՝ երկու SIM քարտի բնիկներով (SMS, մոնիտորինգ, բջջային հավելված, PUSH ծանուցումներ) ձայնային հաղորդագրությունների մոդուլ (ձայնային հաղորդագրություններ հեռախոսային ծանուցման համար) ձայնային ազդանշանի ստուգման մոդուլ Համակարգի 2 բաժին (գոտիների խմբեր). Անվտանգության ռեժիմների 3 տեսակ երկու հատվածում գոտիներ հատկացնելու ունակություն համակարգի վերահսկում օգտվողի կողմից կամ թայմերի միջոցով հաղորդակցման հանգույցով միացող ստեղնաշար (PRF-LCD) և ընդարձակիչ մոդուլներ (INT-E, INT-O, INT-ORS), ինչպես նաև 433 ՄՀց (INT-RX-S) օժանդակ մոդուլ: համակարգի հսկողություն՝ օգտագործելով. PRF-LCD ստեղնաշարեր (մինչև 4) բջջային հավելված PERFECTA CONTROL միկրոծրագիրը թարմացնելու ունակությունը գաղտնաբառերը. 15 օգտվողի գաղտնաբառ 1 ծառայողական գաղտնաբառ անունների խմբագրում (օգտվողներ, խմբեր, գոտիներ, ելքեր և մոդուլներ)՝ համակարգի կառավարման հեշտացման համար ժամանակաչափեր. 8 ժամանակաչափ՝ գոտիները բացառելու հնարավորությամբ իրադարձությունների մատյան. 3584 իրադարձություն համակարգի հիմնական բաղադրիչների ավտոմատ ախտորոշում	հատ	2450000	2450000	1	ք. Վանաձոր, Շինարարների փ. 12	1	Պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում

				ներկառուցված էլեկտրական սնուցման բլոկ կարճ միացումից մաշտպանություն պաշտպանություն մարտկոցի ամբողջական լիցքաթափումից մարտկոցի լիցքավորման կարգավորում սարքի կարգաբերում. տեղական - ստեղնաշար կամ համակարգիչ PERFECTA Soft ծրագրակազմով տեղադրված, միացված կառավարման RS 232 (TTL) պորտին հեռահար - տեղադրված PERFECTA Soft ծրագրակազմ ունեցող համակարգիչ, որը միացված է կառավարման վահանակին GPRS- ի միջոցով ձայնային հաղորդագրություն - 16 իրադարձությունների մատյան – 3584 խմբեր – 2 ժամանակաչափեր - 8 էլեկտրոնային տախտակը 160 x 68 մմ Գործառնական ջերմաստիճանի սահմանը - -10...+55 ՝C Սնուցող լարում (՞15%) - 18 Վ AC, 50-60 Հց Սպասման ժամանակ ընթացիկ տոկի սպառումը - 150 մԱ մաքսիմալ տոկի սպառումը 180 мА քաշ - 105 г Օդի առավելագույն խոնավությունը - 93՞3% մարտկոցից սնուցումը սպասման ժամանակ - 100 մԱ մարտկոցի վթարի ծանուցում (՞10%) 11 Վ մարտկոցից սնուցման անջատում (՞10%) 10,5 Վ ելքային առավելագույն հոսանք KPD - 500 մԱ / 12 Վ DC Ելքային լարման միջակայք - 10,5 Վ...14 Վ DC Մարտկոցի լիցքավորումը ընթացիկ տոկ 500 էլեկտրաէներգիայի մատակարարման ելքային լարումը - 12 Տեղեկացման համար հեռախոսահամարներ - 8 Ծրագրավորվող ցածր հոսքային ելքերի առավելագույն հոսանք - 25 Մա / 12 Վ DC Ծրագրավորվող ելքերի առավելագույն հոսանք 1000 մԱ / 12 Վ DC Ելք AUX - 500 մԱ / 12 Վ DC							
			Energine 12v 7A/ Gembird Europe B.V.	Մարտկոց 12Վ 7Ա							
			Perfeqta /PRF-LCD	Կառավարման վահանակ Սնող հոսանք (՞15%) 12 В DC Չափսեր 139 x 124 x 22 мм Աշխատանքային ջերմաստիճաններ -10...+55 ՝C Աշխատանքային վիճակում օգտագործող հոսանքի չափ 30 мА օգտագործող հոսանքի մաքսիմում չափ 50 мА Քաշ 246 գ Օդի խոնավություն 93՞3% EN50130-5 ստանդարտի դաս II							
			Perfeqta/ Int-E/	Գոտիների ընդարձակման սարք 8 լարային ծրագրավորվող գոտիներ (հանգույցների օժանդակություն. NO, NC, EOL, 2EOL/NO, 2EOL/NC) Սնող հոսանք (՞15%) 12 В DC Չափսեր 80 x 57 мм Աշխատանքային							

				ջերմաստիճաններ -10...+55 ՝C Աշխատանքային վիճակում օգտագործող հոսանքի չափ 35 մA օգտագործող հոսանքի մաքսիմում չափ 80 մA Քաշ 47 գ Օդի խոնավություն 93՞3% EN50130-5 ստանդարտի դաս II							
			Energine / Gembird llc	Անխափան սնուցման սարք 12V3A							
			RUBEZH Ռուբեժ ՍՊԸ	Ներսի շչակ Սնող հոսանք (՞15%) 12 B DC Չափսեր 87x88x44мм Աշխատանքային ջերմաստիճաններ -40...+45 ՝C Աշխատանքային վիճակում օգտագործող հոսանքի չափ Ձայնային ազդարարման դեպքում 35 մA Լուսային ազդարարման դեպքում 35 մA Ձայնի ճնշման մակարդակը 1 մ հեռավորության վրա ոչ պակաս քան 100db							
			RUBEZH /Ռուբեժ ՍՊԸ	Ծխի տվիչ /ИП-212-141 Սնող հոսանք (՞15%) 9-30v DC Չափսեր Մ94x44 мм Աշխատանքային ջերմաստիճաններ -40...+55 ՝C Աշխատանքային վիճակում օգտագործող հոսանքի չափ 45 мкA Դիմադրությունը ՀՐԴԵՀ ռեժիմում ոչ ավելի քան 1 kOm Տվիչի զգայունությունը համապատասխանում է շրջակա միջավայրի ծխահարությանը, լույսի հոսքը թուլացնելով 0,05 - 0,2 дБ/м							
			ИПДЛ-Д-I/4Р/ ՆՊՖ ՊՈԼԻՍԵՐՎ ԻՍ ՍՊԸ	Ծխի տվիչ լաազերային Սնող հոսանք (՞15%) 12/24v DC Չափսեր 150x95x80 мм Աշխատանքային ջերմաստիճաններ -25...+55 ՝C Աշխատանքային վիճակում օգտագործող հոսանքի չափ 30 մA Տվիչի հսկման տարածք 900 մԱ							
			ИП 103-5/4-А3/ ООО НПКФ КОМПЛЕКТСТРОЙСЕРВИС	Բոցի տվիչ Երկլարային Չափսեր Մ90 мм Աշխատանքային ջերմաստիճաններ -50...+60 ՝C							
			ИПР 513-10/ Ռուբեժ ՍՊԸ	Ահազանգման Կոճակ Սնող հոսանք (՞15%) 9-30v DC Չափսեր 88x86x45 мм Աշխատանքային ջերմաստիճաններ -40...+65 ՝C Աշխատանքային վիճակում օգտագործող հոսանքի չափ 50 мкA Տվիչի դիմադրությունը ՀՐԴԵՀ ռեժիմում 500мA							
			220В/ 220В LLC	Սակառ 16x16							
			Paritet/КСПВ	Մալուխ 6*0,40 , D-արտաքին = 3,7 мм, D- = 0,4 мм							

			Andeli/ Andeli LLC	Ամրացման դետալներ 3*20							
				Համակարգի տեղադրում ըստ հատակագծի, ծրագրավորում և փորձարկում: 1 (մեկ) տարվա երաշխիքային սպասարկում							

ԳՆՈՐԴ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Վանաձոր Շինարարների 12
Բանկը՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930009059530100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտորի պ.կ.,
պրոռեկտոր ---------- Ռ.Վ. Աղգաշյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ԱՁ Սարգիս Գասոյան
Հասցեն ք.Վանաձոր Տարոն 4 Բել. 3/5
Բանկ ԱԿԲԱ ԲԲԸ
Հ/Հ 220059678338000
ՀՎՀՀ 66981199

---------- Ս.Գասոյան
/ստորագրություն/
Կ.Տ

Մասնաշենքների հատակագիծը



Հանձնող

Ընդունող

Ինվ. նկարագրամատյանի 217

Գրանցվածության թվագիր

1 I հարկ
D=0.3-0.7
d=0.1-0.5
n=3.2, 3.5, 5.5, 6.5



ՇԻՆՈՒԹՅՈՒՆ

33 պետական հարկ

Մասշտաբ 1:100 | Հանձնման վաստակագիր



Կատարող

Որակավորման վկայականի 217

Իրավաբանական անձի

4 6

ՀԱՍԱԿԱԳԻԾ

Բնակելի շենք

Բնակելի շենքերի 12

Մասշտաբ 1:200




1. III հարկ
D=0.3-0.7
d=0.1-0.5
h=3.2
III հարկ
VI և VII հարկ
VII

ՇԻՆՈՒԹՅՈՒՆ

33 պետական գր.

2012

Մասց. մասնագ. Հասմիկ Հակոբյան



Գլխավոր մասնագետ

Գրանցվել է Գլխավոր մասնագետ

Գրանցման համար 217

Գրանցման ամսաթիվ 06.04.2012

Գրանցման ենթակա է 273,110,00026

Ստորագրություն

Հավելված N 2
« 18 » Դեկտեմբեր 2020 թ. կնքված
ՀԱՊՀԱՄ-ԳՀԱՊՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**		
			նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	31625100	հրդեհի հայտնաբերման համակարգեր	2450000	2450000	2450000

ԳՆՈՐԴ
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Վանաձոր Շինարարների 12
Բանկը՝ «Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930009059530100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտորի պ.կ.,
պրոռեկտոր ---------- Ռ.Վ. Աղգաշյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ԱՁ Սարգիս Գասոյան
Հասցեն ք.Վանաձոր Տարոն 4 Բել. 3/5
Բանկ ԱԿԲԱ ԲԲԸ
Հ/Հ 220059678338000
ՀՎՀՀ 66981199

---------- Ս.Գասոյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 2020 թ. կնքված
ՀԱՊՀՎՄ-ԳՀԱՊՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« ե « ե 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____ե «_____ե 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « ե « ե 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2020 թ. կնքված
ՀԱՊՀՎՄ-ԳՀԱՊՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Մակագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն